Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

11. 01. 2022թ. ք. Կապան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Գևորգ Գրիգորյանս ուսումնասիրելով «28» 12 2021թ-ին վերսկսված թիվ 01720203, «07» 01 2022թ-ին վերսկսված թիվ 01720225, թիվ 01720214, «25» 09 2021թ-ին վերսկսված թիվ 07019487, թիվ 07019347, թիվ 07019593, թիվ 07018815 և թիվ 07040603 կատարողական վարույթների նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ/1445/02/15 կատարողական թերթի համաձայն պետք է Արա Հարությունյանից, Վրեժ Գրիգորյանից և Գևորգ Մարտիրոսյանից համապարտությամբ հօգուտ <<Կամուրջ ՈւՎԿ>> ՓԲԸ-ի բռնագանձել 10.465,31 ԱՄՆ դոլար և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 11.01.2021թ-ին տրված թիվ ՍԴ/0306/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է Արա Հարությունյանին, Մելանյա Ավետիսյանին, Մանյա Հարությունյանին, Գարեգին Հարությունյանին, Արթուր Հարությունյանին և Աշոտ Հարությունյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Սյունիքի մարզի Ծավ համայնքի Շիշկերտ գյուղում գտնվող թիվ 1 փողոցի թիվ 5 հասցեում 201.2քմ բնակելի տունը և 1017քմ մակերեսով տնամերձ հողատարածքը /վկայական թիվ 217712/, 52քմ հողատարածքը /վկայական թիվ 2177174/, 165քմ տնամերձ հողատարածքը /վկայական թիվ 2177175/, 387քմ տնամերձ հողատարածքում առկա 61.5 գոմը /վկայական թիվ 2268612/, 506քմ հողատարածքը /վկայական թիվ 2268613/, 1402քմ գյուղ նշանակության հողամասը /վկայական թիվ 2177180/, 833քմ գյուղ նշանակության վարելահողը /վկայական թիվ 2177182/, 777քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177176/, 3197քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177178/, 2912քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177185/, 3082քմ գյուղ նշանակության խոտհարքը /վկայական թիվ 2177184/, վաճառել հրապարակային սակարկություններով, ստացված գումարը հետագայում բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցներ Արա Հարությունյանի, Մելանյա Ավետիսյանի, Մանյա Հարությունյանի Գարեգին Հարությունյանի, Արթուր Հարությունյանի և Աշոտ Հարությունյանի միջև յուրաքանչյուրին գումարի 1/6-ի չափով: Մանյա Հարությունյանի 1/6-րդ բաժնեմասի գումարը թողնել Հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվում մինչև նրա ժառանգության ձևակերպումը: Թիվ ՍԴ/0924/02/17 կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթներով 11.01.2022թ-ին որոշում է կայացվել վերը նշված գույքերը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին:

Արա Հարությունյանին, Մելանյա Ավետիսյանին, Մանյա Հարությունյանին Գարեգին Հարությունյանին, Արթուր Հարությունյանին, Աշոտ Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Սյունիքի մարզի Ծավ համայնքի Շիշկերտ գյուղում գտնվող 1624քմ գյուղ նշանակության վարելահողից /վկայական թիվ 2177177/, 5577քմ գյուղ նշանակության վարելահողից /վկայական թիվ 2177179/, 1269քմ գյուղ նշանակության վարելահողից /վկայական թիվ 2177181/, 7672քմ գյուղ նշանակության խոտհարքից /վկայական թիվ 2177183/, 5646քմ գյուղ նշանակության խոտհարքից /վկայական թիվ 2177187/ բնեղենով առանձնացնել Արթուր Հարությունյանի 1/6-րդ բաժնեմասը՝ <<Վարմօն Ռիելթի>> ՍՊԸ-ի կողմից 17.01.2019թ-ի <<305-01/Վ-018>> փորձագետի եզրակացության համաձայն /տես հետազոտական մասի սխեմատիկ հատակագծում/:

Կատարողական գործողությունների արդյունքում վերը նշված գույքերի գնահատման նպատակով նշանակվել է փորձաքննություն, որի վերաբերյալ փորձագետի կողմից տրվել է համապատասխան գնահատման եզրակացություններ:

Կատարողական թերթի պահանջները կատարելու նպատակով անհրաժեշտ է վերը նշված գույքերից պարտապան Արա Հարությունյանին պատկանող 1/6-րդ բաժնեմասերը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ իրացման նպատակով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Արթուր Հարությունյանին, Արա Հարությունյանին, Աշոտ Հարությունյանին, Գարեգին Հարությունյանին, Մելանյա Ավետիսյանին և Մանյա Հարությունյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքերից՝ Արա Հարությունյանի 1/6-րդ բաժնեմասերը

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	Գույքի քանակը
1.	**ՀՀ Սյունիքի մարզի Ծավ համայնք Շիշկերտ վարելահողի 1/6-րդ բաժնեմաս, ընդհանուր մակերեսը 1624քմ, որից 1/6 բաժնեմասը 270.66քմ /վկ. համար 2177177, ծածկագիր 09-048 327-37/**	**4.166,7 ՀՀ դրամ**	**3.125,025 ՀՀ դրամ**	1/6 բաժնեմաս
2.	**ՀՀ Սյունիքի մարզի Ծավ համայնք Շիշկերտ վարելահողի 1/6-րդ բաժնեմաս, ընդհանուր մակերեսը 5577քմ, որից 1/6 բաժնեմասը 929.5քմ /վկ. համար 2177179, ծածկագիր 09-048 312-22/**	**12.500 ՀՀ դրամ**	**9.375 ՀՀ դրամ**	1/6 բաժնեմաս
3.	**ՀՀ Սյունիքի մարզի Ծավ համայնք Շիշկերտ վարելահողի 1/6-րդ բաժնեմաս, ընդհանուր մակերեսը 1269քմ, որից 1/6 բաժնեմասը 211.5քմ /վկ. համար 2177181, ծածկագիր 09-048 311-19/**	**3.333,3 ՀՀ դրամ**	**2.499,9 ՀՀ դրամ**	1/6 բաժնեմաս
4.	**ՀՀ Սյունիքի մարզի Ծավ համայնք Շիշկերտ խոտհարքի 1/6-րդ բաժնեմաս, ընդհանուր մակերեսը 7672քմ, որից 1/6 բաժնեմասը 1278.66քմ /վկ. համար 2177183, ծածկագիր 09-048 328-36/**	**10.833,3 ՀՀ դրամ**	**8.124,9 ՀՀ դրամ**	1/6 բաժնեմաս
5.	**ՀՀ Սյունիքի մարզի Ծավ համայնք Շիշկերտ խոտհարքի 1/6-րդ բաժնեմաս, ընդհանուր մակերեսը 5646քմ, որից 1/6 բաժնեմասը 941քմ /վկ. համար 2177187, ծածկագիր 09-048 336-8/**	**7.500 ՀՀ դրամ**	**5.625 ՀՀ դրամ**	1/6 բաժնեմաս

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ «01» 03 2022թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով : «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԼԵՅՏԵՆԱՆՏ **Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**